ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Մանե Շուշանյան

   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Սննդամթերքի անվտանգության վարչության գլխավոր տեսուչ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ղազախստան (ք. Աստանա), 2024 թվականի հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 1-ը:

3. **Հրավիրող կողմը.**

   Եվրոպական հանձնաժողովի «Ավելի լավ վերապատրաստում ավելի անվտանգ սննդի համար» նախաձեռնությամբ (BTSF):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Ամրապնդել առևտրային հարաբերությունները ԵՄ անդամ չհանդիսացող երկրների հետ, որի արդյունքում կբարելավվի երկու կողմերի շուկայական հասանելիությունը: Գործուղման նպատակն էր խթանել սննդի կայուն համակարգերը՝ ներառելով ԵՄ-ի կենդանիների բարեկեցության մասին օրենքները, ինչպես նաև ԵՄ վերահսկողական գործիքակազմին ծանոթանալը:

5. **Քննարկված թեմաները.**

   Հանրային առողջության պահանջներ ներկայացվող ԵՄ դիրեկտիվների պահանջները, դրանց նկատմամբ իրականացվող վերահսկողական գործառույթները, լաբորատոր հսկողությունը, աուդիտի իրականացումը, ինչպես նաև սննդի հիգիենայի հատուկ կանոնները և դրանց ներքին հսկողությունը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Քննարկվել են Եվրոպական Միության օրենսդրական կարգավորումները՝ կենդանիների և կենդանական ծագման սննդամթերքի ներմուծման նոր պահանջները՝ հիմնված հակամանրէային կայունության դեմ պայքարի գլոբալ գործողությունների ծրագրի վրա, կենդանիների բարեկեցության պահանջները, հանրային առողջության պահպանման ընդհանուր սկզբունքները, սննդամթերքի մանրէաբանական չափորոշիչները, ԵՄ-ում կոմպոզիտային արտադրանքի մուտքի պայմանները, ինչպես

նաև կենդանական ծագման սննդամթերքում ախտորոշիչների մնացորդային քանակների նկատմամբ պաշտոնական հսկողության պահանջները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Դասախոսական կազմը, դասընթացի կազմակերպիչները և դասընթացի մասնակիցները պայմանավորվել են ստացված գիտելիքները աշխատանքային ռեժիմով փոխանցել գործընկերներին:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ակնկալվում է, որ ստացված գիտելիքները օգտագործվեն հետագա ոլորտային բարեփոխումների և իրավական ակտերի լրամշման ժամանակ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.** 05 նոյեմբերի 2024թ